




ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆՆ ՈՒ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԴԱՐՁԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈՋ ՄԱՅՐ
ՏԱԾԱՐՈՒՄ

Փետրվարի 26-ին, հինգշաբթի օրը, Մայր Աթոռում հանդիսությամբ նշվեցին «Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց՝ հազար երեսուն և վեց վկայիցն, որք կատարեցան ի մեծի պատերազմին» տոներ և Հայոց Հայրապետի անվանակոչության տարեդարձը։ «Յիշատակ մեռելոց և տօն ազգային»։

Փետրվարի 25-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան, ավանդական շուքով Մայր տաճարում տեղի է ունենում Վարդանանց նախատոնակը։

Փետրվարի 26-ին, հինգշաբթի օրը, Մայր տաճարում պաշտովում է հանդիսավոր ժամերգություն, որին մասնակցում են Մայր Աթոռի միաբանությունն ու հոգևոր ճեմարանի ուսանողությունը։

Ժամը 10-ին սկսվում է ս. պատարագը։ Օրվա տոնի առթիվ պատարագում է հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քահանա Մարությանը։

Ս. պատարագի երգեցողությունը կատարում են ճեմարանի սաները՝ ղեկավարությամբ ճեմարանի եկեղեցական երաժշտության ուսուցիչ պրն. Հայկ Ֆրունջյանի։

Ժամը 12-ին Վեհափառ Հայրապետը հանդիսավոր թափոքով առաջնորդվում է Մայր տաճար։

Ս. պատարագից հետո, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, միաբանությունը հավաքվում է Իջման ս. սեդանի առաջ։ Պատարագիչ տեր հայրը քարոզում է «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահություն է» պատմիչ Եղիշեի խոսքերի քննարանով։ Տեր Հովհաննես ավագ քահանան ոգեկոչում է Վարդանանց քաջամարտիկ հերոսների հիշատակը, խոսում նրանց կատարած եկեղեցանվեր ու հայրենասիրական սխրանքի մասին։

Ապա, Վեհափառ Հայրապետի անվանակոչության տոնի ուրախ առիթով, քարոզիչ տեր հայրը, հանուն հոգևոր ճեմարանի, ջերմորեն շնորհավորում է Նորին Սրբության անվանակոչության տարեդարձը՝ սրտագին քարեմաղթություններ կատարելով Նրա կյանքի արևշատության, քաջաողջության և Մայր Աթոռ ս. Էջմիածնի պայծառության ու անաստանության համար։

Քարոզից հետո Իջման ս. սեդանի առաջ, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում Հայրապետական մաղթանք։ Ապա Վեհափառ Հայրապետն առաջնորդվում է Վեհարան, որտեղ, հանուն Մայր Աթոռի միաբանության, Գերագույն հոգևոր խորհրդի, պաշտոնեության և ողջ հավատացյալ ժողովրդի, լուսարարապետ

տ. Հուսիկ եպս. Մանթորյանը կրկին անգամ շնորհավորում է Նորին Սրբության անվանակոչության տոնը և ցանկանում Նրան երկար ու երջանիկ հովվապետություն, եկեղեցական և շինարարական գործերի հաջողություն:

Վեհափառ Հայրապետն իր գոհունակությունն է հայտնում արտահայտված ջերմ շնորհավորանքների համար և օրհնում ներկաներին:

Մայր Աթոռի միաբաններն աջահամբույրով շնորհավորում են Հայոց Հայրապետի տոնը:

ՀԱՆՐԱՅՐԻՆ ՀՈԳԵՎՈՐ ԾԵՄԱՐԱՆՈՒՄ

Ժամը 12.30-ին հոգևոր ճեմարանի դահլիճում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում հանդես՝ նվիրված սրբոց Վարդանանց և Ղևոնդյանց հիշատակին:

Դահլիճը լիքն էր հավատացյալների բազմությամբ:

Հանդեսը սկսվում է Հայաստանի պետական հիմնի նվագով: Հոգևոր ճեմարանի ավագ վերակացու տ. Արտակ քահանա Սիմոնյանը կարդում է հետևյալ բովանդակային բացման խոսքը.

«Վեհափառ Տեր,

1600 տարիներ առաջ, հանուն քրիստոսագիր լույսի կենսատու ծաղկումի, հանուն հայոց ոգու ինքնության, Մաշտոցյան հրաշքի հավերժության, տեղի ունեցավ Վարդանանց պատերազմը, որը քրիստոնեության պատմության մեջ առաջին փորձըն էր, որով մի ժողովուրդ իր հավատքի, իր համոզմունքների, իր հայրենիքի և ազատության սիրուն ողջակիզվում էր կամավոր զոհաբերությամբ:

Ավարայրը ռազմական հասկացողությամբ պարտություն էր, սակայն պատմական անըմբռնելի հրաշքով ճակատամարտը դարձավ բարոյական մեծ և տիրական հաղթանակ հայ ժողովրդի համար և եղավ մշտնջենական խորհրդանիշը հայ եկեղեցու հերոսացման ու հայության հավաքական սրբացման:

Լույսի և խավարի պայքարն էր Ավարայրը, հավերժության և ակնթարթի պայքարը: Խավարն ու ակնթարթը չկարողացան իրենց մեջ ծրարել լույսն ու հավերժությունը: Եվ լույսը հորդեց, հավերժությունը հաղթանակեց և իր մեջ ընդգրկեց ժամանակն ամբողջ:

Ի դարում, երբ պատմական շատ իրադարձություններ գունաթափվել են, Ավարայրի սիրանքը մնում է չխամրող, հավերժ կենդանի իրականություն-հրաշք:

Եվ ամեն անգամ, երբ ոգեկոչում ենք Վարդանի և հազար երեսունվեց նահատակների հիշատակը, ակնածանքով ու հիացած մտածում ենք, թե որքա՞ն նահապարհ պիտի կտրած լինեք մի ժողովուրդ, ինչպիսի՜ ազգային, մշակութային, հոգևոր բարձր մակարդակ պիտի ունենար, որ տակավին Ե դարում ոտքի բարձրանար և տասնյակ հազար կամավորներ ազգային իրենց սրբությունները պաշտպանելու համար գնային «գիտակցված մահվան»:

Ավարայրին հաջորդեց Սարդարապատը, Վարդանին հաջորդեցին Անդրանիկը և ուրիշ հերոսներ մեր օրերին, և այսպես դար ու դարեր կույեցինք, դար ու դարեր «վասն Հիսուսի, վասն հայրենյաց» մաքառեցինք, որ Վարդանի թափած արյունից միշտ վարդ-կակաչներ բացվեն, որ Վարդանի ոգին ամեն հայի կրծքի տակ բողբոջի, որ Վարդանի հավատը ամեն հայի սրտին անձրևի, որպես անձկալի շնորհ և աստվածատուր օրհնություն:

Այսօր, երբ մեր ժողովրդի նավը հասել է խաղաղ նավահանգիստ, բազում այսպիսի փառավոր ակնթարթների շնորհիվ մենք մեծ ոգևորությամբ, մեծ սիրով ու երախտագիտությամբ տոնում ենք նաև Ամենայն Հայոց Սրբազնագույն կաթողիկոս Վազգեն Ա-ի անվանակոչության օրը:

Ավարայրը հայ ոգու հավերժության գեղեցիկ արտահայտությունն էր: Այդ ոգին դարեր շարունակ պահեցին մեր եկեղեցու եռամեծ հայրապետները: Այդ ոգով է առլըցուն ա. Գրիգոր Լուսավորչի Աթոռի այսօրվա գահակալը՝ մեր սիրելի Վեհափառ Հայրապետը: Վկա է այսօրվա ա. Էջմիածինը, Մայր Աթոռի ծաղկումը, շինարարությունները, վկա են Վեհափառի ազգապահպանման և հայրենասիրական, խաղաղասիրական աշխատանքները, վկա՝ այսօրվա պատմությունը, և վկա ենք մենք:

Վեհափառ Տեր, թույլ տվեք Վարդանանց ոգեկոչմանը նվիրված այս հանդիսությունը հայտարարել բացված:

Այնուհետև գործադրության է դրվում գեղարվեստական մի ճոխ ծրագիր:

Հոգևոր ճեմարանի սաները, դեկավորությամբ երաժշտության դասատուներ պրն. արն. Խորեն Մելիքանեջյանի և Հայկ Ֆրունջյանի, մեծ ոգևորությամբ կատարում են հետևյալ հոգևոր և հայրենաշունչ խմբերգերը. «Ճեմարանի քայլերգ»-ը, «Նորահրաշ» և «Արիացեալք» շարականները, «Իմ հայրենյաց հոգի Վարդան», «Պալույն Ավարայրի», «Ազնիվ ընկեր», «Բամ փորոտան» և «Ծաղկիր, ազատ իմ հայրենիք» երգերը:

Բ լսարանի ուսանող Կիրակոս սրկ. Հովհաննանը մեներգում է Եկմայանի «Լոնց.

ամպերը»։ Իսկ ճեմարանի Գ դասարանի տան Վաչագան Ավետիքյանը արտասանում է Սիրվա Կապուտիկյանի «Զրահապատ Վարդան գորպիլար» բանաստեղծությունը և Եղվարդի «Վարսիր Զորավար» պոեմից մի հատված։ Նույն պոեմից մի հատված է արտասանում նաև նույն դասարանի ուսանող Հովսեփ Պալըզյանը։ Գ դասարանի ուսանող Գևորգ Արամյանն ու Բ լսարանի ուսանող Բյուզանդ Գալստյանն արտասանում են Եղիշեի «Պատմություն»-ից հատվածներ՝ գրաբարով։

Օրվա գլխավոր բանախոսն էր հոգևոր ճեմարանի դասախոս Սամվել Անդոնյանը, որն իր բովանդակայից բանախոսությանը վերադառնալով է Վարդանանց պատերազմի քաղաքական ու տնտեսական պատճառները և շեշտում Ավարայրի ճակատամարտի պատմական նշանակությունը մեր եկեղեցու, մեր ժողովրդի և Հայոց աշխարհի համար՝ Ավարայրից մինչև Սարդարապատ և մինչև հայրենական վերածննդի այս օրերը։ Իր բանախոսության մեջ Սամվել Անդոնյանն ասում է.

«Վարդանանց և Ղևոնդյանց նահատակների ոգեկոչումը եկեղեցական տոն է, համազգային տոն։ Ահա արդեն մեկուկես հազարամյակ հայ ժողովուրդը ամեն տարի խորին երկյուղածությամբ և երախտագիտությամբ հիշում է Ավարայրի նահատակներին, որոնց արած գործը բարձրացավ ա՛յն օրվա և ա՛յն ժամանակաշրջանի կարեկրությունից և ժամանակի ընթացքում հայ ազգի, մեր տեսակի պահպանման հավիտենական խորհրդանիշը դարձավ։

Մեր ժողովրդի պատմության ամբողջ տևողության ընթացքում պարբերաբար և ամեն անհրաժեշտ առիթով դիմել են Վարդանին, նրան ոգեկոչելով նոր լիցք ստացել։ Այդպես են վարվել Սեբեոս պատմիչը և դարում, Ներսես Շնորհալին ԺԲ դարում, Ալիշանն ու Ռ. Պատկանյանը ԺԹ դարում և վերջապես՝ Դ. Դեմիրճյանը մեր օրերում։ Մեր մեծ գորավարի բրոնզաձուլ արձանն և կանգնեցված այսօր մեր քաղաքամայր Երևանի գլխավոր մայրուղու վրա։ Այսպես դարեդար քայլում են Վարդանանք բոլոր հայ սերունդների հետ որպես հավերժի ճամփորդներ։ Ամեն մի սերունդ նորանոր խորհուրդներ է հայտնաբերել Վարդանանց նահատակության մեջ, և իրոք ամեն անգամ կարելի է ուսանել և ընդօրինակելի նորանոր խորհուրդներ գրտնել Վարդանանց հերոսամարտի և նահատակության մեջ։

Ե դարում հայությունը վաղուց հոգեբանորեն պատրաստ էր դիմավորելու այդ տխուր վախճանը, սակայն դպրությամբ և

քրիստոնեական հայեցի դաստիարակությամբ իմաստնացած դիմավորեց։ Որքան հզոր էր Պարսկաստանը նյութեղեն առումով, այնքան ավելի թույլ էր իր դավանած հեթանոսությամբ։ Ընդհակառակն, օտար տերության հպատակ Հայաստանը հոգեկան մեծ ուժ էր ներկայացնում իր դավանած քրիստոնեական վարդապետությամբ։ Այստեղ արժե խոսել Ե դարի մեծ փիլիսոփա Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» սքանչելի գործի մասին։ Այս գիրքը Վարդանանց պատերազմի նախօրեին գրվածավարտված էր և, անկասկած, ընթերցված ժամանակի հոգևորականների և աշխարհական մեծամեծների կողմից։ Եզնիկյան տրամաբանությամբ ջախջախված հեթանոսությունը այլևս վերադարձ չունեի դեպի Հայաստան։ Պատմական հայտնի փաստ է, որ ամեն մի մեծ հասարակական շարժում նախապատրաստվում է մարդկանց ուղեղներում։ Պարսկաստանը պատերազմ հայտնարեց հայությանը, սակայն մինչև այդ հեթանոս Պարսկաստանին պատերազմ էր հայտարարել Եզնիկ Կողբացին։ Ահա թե պատմական այդ եղելությունը ինչպես է գնահատում պատմաբան Լեոն. «Անհնարին էր, որ հայ լուսավորությունը կարողանար ընդգրկել պարսկական տգետ հետամնացությունը։ Մի երկիր, որ հոգեկան պահանջ էր դարձրել Եզնիկի գրականությունը, չէր կարող վախճանալ հրամաններից և ենթարկվել նրանց։ Մասանյան ահեղ պետությանն ամենից առաջ պատերազմ էր հայտարարում Եզնիկի փոքրիկ և ոսկեղենիկ «Եղծ աղանդոց»-ը (ընդգծումը մերն է—Ս. Ա.)¹։

Մեր Եղիշե պատմիչը շատ ճիշտ է հսկայեղ պարսից արքունիքի քաղաքականությունը։ Մոգերն իրենց թագավորին խորհուրդ են տալիս. «Աստվածներն ամենևին հարստության կարոտ չեն, միայն թե մի կրոնի դարձնես քո տերության մեջ գտնված բոլոր ազգերին ու ժողովուրդներին. այն ժամանակ հույների երկիրն էլ հնազանդվելով՝ կենթարկվի քո իշխանությանը» (ընդգծումը մերն է—Ս. Ա.)²։ Հավատարացության պահանջին նախորդում է հպատակ ազգերի զինվորական ուժը տկարացնելու, տնտեսական-հարկային դաժան քաղաքականության, հայ հոգևորականության կամքը ընկճելու մի շրջան. հպատակ քրիստոնյա ազգերի այրումին արքունի հրամանով պատերազմելու է գնում հոգների դեմ. բա-

¹ Լեո, Երկերի ժողովածու, երկրորդ հատոր, Երևան, 1967, էջ 47։

² Եղիշեի Վարդանանց պատմությունը, թարգմանությունը՝ Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1958, էջ 15։

նախում աշխուժանում է մոգերի ավեր աշխատանքը, շատ հալ գորավարներ են նահատակվում քրիստոնեությունը պաշտպանելու համար: Դեմոնացիները նոր աշխարհագիր է անցկացնում Հայաստանում. տրեւտեսապես տկարացնելով՝ ուզում են հոգուն տիրել: Տեսե՛ք, թե ի՞նչ զգաստ է գնահատում պարսից արքունիքի այս քաղաքականությունը Եղիշե պատմիչը. «Որտեղից պետք էր հարյուր դահեկան առնել, կրկնապատիկն էին առնում. այնպես էլ հարկի տակ դրին եպիսկոպոսներին և երեցներին, ո՛չ միայն շեն, այլև ավերակ տեղերը: Մահավաճող ո՛վ կարող է պատմել, թե ինչպիսի ծանր տուրքեր ու սակեր, բաժեր ու հասեր էին նշանակված լեռների, դաշտերի և անտառների վրա: Առնում էին ոչ թե ինչպես վայել է պետական արժանապատվությանը, այլ ավազակաբար հափշտակելով... Եվ այս ամենն անում էր, որպեսզի, գուցե բանդի միաբանությունը, և եկեղեցու ուխտը ցրվե... և շինականներին տկարացնի. և չափազանց սողաշտության պատճառով ակամա ընդունեն մոգական կրոնը» (ընդգծումը մերն է—Ս. Ա.)³:

Հայերի կամքն անընկճելի է, Հազկերտի տնտեսական դաժան քաղաքականությունը՝ ձախողված: Հետևում է հրովարտակով հավատորացության պահանջ: Սակայն ո՛ր էր, շա՛տ ուշ Հայաստանը հեթանոսության վերադարձնելու համար: Այդ լավագույնս երևում է արքունի հրովարտակին պատասխանելու համար Արտաշատ քաղաքում հավաքված երկրի աշխարհական և հոգևոր պետերի խիզախ պատասխանում, որ ավարտվում էր այսպես. «Այս հավատից մեզ ոչ ոք չի կարող խախտել, ո՛չ հրեշտակները և ո՛չ մարդիկ, ո՛չ սուրբ և ո՛չ հուրը, ո՛չ ջուրը և ո՛չ էլ որևէ այլ դառն հարված:

Մեր ամբողջ գույքն ու ստացվածքը քո ձեռքումն են, և մեր մարմինները քո առաջն են. քո կամքի համաձայն արա՛, ինչ ուզում ես... ո՛չ էլ երկնքում ուրիշ Աստված կրնա դուներեք Հիսուս Քրիստոսի փոխարեն, որից բացի՝ ուրիշ Աստված չկա:

Իսկ եթե այս մեծ վկայությունից հետո ուրիշ բան հարցնես, ահավասիկ պատրաստ ենք՝ մեր ամբողջ մարմինը քո ձեռքը տված. արա՛ շուտով՝ ինչ որ կամենում ես: Քո կողմից տանջանք, իսկ մեր կողմից հանձնառություն. քո սուրբ և մեր պարանոցները... Մեր հավատի ուխտը ոչ թե մարդու հետ է... այլ Աստծո հետ է անլուծելի կերպով, որ անհնար է քանդել ու հեռանալ ո՛չ այժմ և ո՛չ հետո, ո՛չ հավիտյանս

և ո՛չ էլ հավիտենից հավիտյանս»⁴: Արդարեվ խիզախ պատասխան, հետո դիվանագիտական լեզվից, որ բացառիկ մնաց մեր ժողովրդի պատմության մեջ և գուցե թե ամենախիզախներից մեկը աշխարհի բոլոր ժողովուրդների պատմության մեջ: Կարծում ենք, որ Արտաշատի ժողովի ոգին Եզնիկ Կողբացին էր՝ ոգեկան և նյութական կրկնակի առումով: Ի թիվս ժողովի մասնակից եպիսկոպոսների գտնում ենք «Եզնիկ՝ Բագրևանդի եպիսկոպոս»⁵: Սակայն առավել հավաստին հայոց պատասխանի մեջ պարսից հեթանոսական կրոնի այն շարադրանքն է, որ մենք ճիշտ ու ճիշտ գտնում ենք «Եղծ աղանդոց» գրքում: Կրկնում ենք, ոգեղեն թե նյութական առումով Եզնիկի ոգին էր թևածում հայոց պատասխանի մեջ, իսկ հիմքը հակահեթանոսական, հակապարսկական այն ոգին էր, որ տիրել էր Հայաստանին: Նույնիսկ խորագետ Վասակ մարզպանն անգոր էր պայքարել այդ ոգու դեմ: Այդ ոգին առավելապես երևում է Կեղծ ուրացությունն ընդունած հայ նախարարների՝ պարսիկ մոգերի հետ Հայաստան մուտք գործելուց հետո: Զգաստ պատմաբան Լեոն խոստովանում է. «Իսկապես հոգևորականությունն էր, որ համարձակորեն իր ձեռքն առավ երկրի ամբողջ կառավարությունը, տալով նրան կատարյալ հեղափոխական բնավորություն»⁶: Մի բացառիկ ոգի էր տիրում Հայոց աշխարհում, որի լավագույն թարգմանը Եղիշեն է. «Հարազատ եղբոր ձեռքը թող բարձրանա այն մերձավորի դեմ, որ դուրս է եկել Աստծու պատվիրանի ուխտից. հայրը չխնայի որդուն, և որդին չակնածի հոր պատվից: Կինը կուլի իր ամուսնու դեմ, և ծառան դիմադրի իր տիրոջը: Աստվածային օրենքը ամեն բանում...»⁷: Հայաստան ուղարկված մոգերը ոչ մի հաջողության չեն հասնում. գուցե որպես անմախաղեպ երևույթ, նրանք ակամա են լինում իրենց կառուցած ատրուշանների կործանման և անշեշ կրակի ուռնակոխ լինելուն ու ցրիվ տրվելուն: Այն աստիճան, որ ջարդ կերած պարսիկ մոգերն անգամ խոստովանում են, թե «մարդիկ, որոնք ո՛չ շղթաներից են վախենում, ո՛չ տանջանքներից երկյուղ կրում և ո՛չ հարստությունը բանի տեղ դնում և, վերջապես, որ բոլոր չարիքներից ամենից վատթարն է, մահը գերադասում են կյանքից, ո՛վ է, որ կարող է նրանց դիմադրել»⁸:

⁴ Եղիշե, նույն տեղում, էջ 40—41:

⁵ Եղիշե, նույն տեղում, էջ 31:

⁶ Լեո, նշվ. ժող., հատոր 2-րդ, էջ 62:

⁷ Եղիշե, նշվ. աշխ., էջ 55:

⁸ Եղիշե, նշվ. աշխ., էջ 56—57:

³ Եղիշե, նշված աշխատությունը, էջ 27:



Մի խոսքով՝ այն ոգեկանությունը, որ Եղիշեն խոսացրել է «Մամ ոչ իմացեալ մամ է, մամ իմացեալ անմահութիւն է» խոսքի մեջ: Այս օրերին հառնում է Ղևոնդ երեցի ոգեղեն կերպարը: Ի դէպ, բոլորովին պատահական չէ, որ հասարակական անցողաբաններին գործոն մասնակցություն է ցուցաբերում հայ կինը, քանի որ հեթանոսությունը գալիս էր խորտակելու հայ կնոջ բարոյական ավանդույթները, մեհամուսնությունը, հարազատության չափը և սահմանները, մի խոսքով՝ հեթանոսությունը խառնակեցադրության պահանջ էր դնում, մի բան, որ կարծում ենք, հենց արքունի հրովարտակից (և ոչ թե դատողությամբ) մեջ է բերում Եղիշեն: «Մեկ կնոջ փոխարեն թող շատ կանայք առնեն, որպէսզի հայոց ազգն անհի, բազմաճա (ինչպիսի՝ հոգատարություն — Ս. Ա.): Աղջիկներն ամուսնանան իրենց հայրերի հետ, և քույրերը՝ եղբայրների հետ. հայրերը չխորշեն իրենց որդիներից, այլև թոռները մոռեն իրենց պապերի անկողինը» (անդ, էջ 51): Այսպես միայն կարելի է հասկանալ պատմիչի այն վկայությունը, որ Ավարայր կռիվն էին իջել ման գինված հայ կանայք և մանավանդ՝ հայոց փառկատուն տիկիներին աշխարհաթող լիճները Ավարայրի ճակատամարտի պարտությունից հետո: Հայ կինը ազատ կամքով վիճակակից դարձավ հայրենիքի և իր պատվի փրկության համար զոհված ու արքորված հայ այրերին:

451 թ. մայիսի 28: Ծավարշանա դաշտում, Տղմուտ գետի ափին, լույսի ընդհարումն էր խալկարի դէմ: Մեր ակամատես կամ կենդանի վկաների պատմածները արձանագրած պատմիչներ Ղ. Փարպեցին և Եղիշեն մի տխուր շեշտ են դնում Վարդան գորավարի և Ղևոնդ երեցի ճտերի մեջ. անհավատալի էր, որ հայերը թվով գերազանց թշնամուն հաղթեին, մանավանդ որ մեծ երկպառակություն կար հայոց շարքերում: Ավարայրը միաժամանակ հայ պարսկասեր և հայրենասեր ուժերի պատերազմն էր: Ռազմական իմաստով պարտություն էր Ավարայրը հայերիս համար, սակայն բարոյական իմաստով՝ հաղթություն: Եվ լիաբերան պիտի բացականչենք՝ փա՛ռք հաղթվածներին: Վարդան Մամիկոնյանը Սահակ Պարթևի թոռն էր. Ավարայրում նա արշամբ արքագործեց Սահակ-Մաշտոցի մեծ տեսիլքը, գրի ու սուտերի դաշն էր Ավարայրը, որ ոգեղեն կամորջով միացրեց Վարդան գորավարին հայ գրերի հրաշագործությունը:

Պատմական ամեն մի իրադարձություն չափվում է իր արդյունքով. Ավարայրը

պարսից արքունիքին համոզեց, որ հայերին հեթանոսության չես վերադարձնի, այլ ավելի խելամիտ է նրանց ազատ թողնել և որպէս արքայից արքայի հավատարիմ ծառաներ օգտագործել: Ծնորհագրկված Վասակ մարզպանին հաջորդած Ատորոմիզդ Արշակունի մարզպանը հուշակեց արքունի հրամանը. «Երկրի հարկերը ներել, արքունի այրուձին էլ միաժամանակ թեթևացնել... սաստիմալաշտության բոլոր կարգերը, ստում էր, հիմա էլ այնպես կատարեն, ինչպես որ կատարում էին առաջվա ժամանակները, նախնիքների օրով... ազատ լինեն թե՛ շինական, թե՛ եկեղեցական, ինչ կաք էլ թողած լինեն, թող գան և յուրաքանչյուրն իր ունեցածին տեր կանգնի... եթե որևէ մեկը բռնությամբ էր մոգություն ընդունել իր կամքին հակառակ... նորից քրիստոնյա դառնա... ով ինչ կամենում է, թող այն պաշտի»⁹: Այսպիսով, Ավարայրը միջազգային առումով շատ ավելի խոշոր իմաստ ստացավ. այդ՝ Պարսկաստանի նահանգն էր իր տիրած ազգերի ստաշ և վերջին հաշվով՝ հպատակ ազգերի վրա պարսկական գաղութատիրությունը հավերժացնելու փորձի կատարյալ ձախողում: Պատմական այս առաքելությունը հայերին վիճակվեց, քանի որ Հայաստանը պարսից տիրապետության մեջ ամենից շատ կշիռ ունեցող երկիրն ու հավաքականությունն էր: Ավարայրը շարունակվեց և՛ ռազմական, և՛ հոգեղեն իմաստով: Հայերի սիրտը կոտորված էր, ի տարբերություն հին ժամանակների, տհաճությամբ էին զինվորական ծառայություն անում: Իրավացի էր Պերոզ կայսրը, երբ, գանգատվելով հայ զինվորներից, նրանց հետինն էր համարում պարսից բանակում: Մյուս կողմից՝ անում էր դիմադրությունը բուն Հայաստանում, և միայն շուրջ երեք տասնամյակ պետք եղավ, որպէսզի Վահան Մամիկոնյան մարզպանը պարտադրի պարսից արքային Հայաստանի անկախության իրավունքը: **Նվարսակի դաշնությունը Ավարայրի բարոյական հաղթանակի ամփոփական արդյունքն էր:** Նաև ա՛յս է Ավարայրի ճակատամարտի իմաստը:

Վարդանանք դարձան խորհուրդ, ոգի, որ տարիների ընթացքում սերմանվեց ամեն հայի մեջ, և ամեն անգամ այդ ոգին օգնեց հայ մարդուն՝ դիմադրելու իր հայապահպանման պայքարում: Պատահական չէ, որ այսօր սփյուռքի տարածքի վրա այդ ոգին օգնում է դիմադրելու հայ մարդուն ընդդեմ ուժացման, ձուլման, օտարացման:

⁹ Եղիշեն, նշվ. աշխ., էջ 118—119:



ՔԱՋՆ ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆԻ ԱՐՁԱՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Վարդանանց հերոսամարտը արգասավոր եղավ նաև գեղարվեստական առումով: Վերևում արդեն հիշեցինք, որ տարբեր դարաշրջաններում թարմացվեց, արդիականացվեց Վարդանանց հերոսապատումը, բեղմնավոր դարձրեց շատ շնորհալիների գրիչները: Այս շարքում առաջին հերթին պետք է հիշել Եղիշե պատմիչին, համակ ոգեղեն մի մարդ, որ առաջին գեղարվեստական կոթողը կանգնեցրեց: Պետք է ընդունել, որ գուցե թե Վարդանանց հերոսապատումը այն ըմբռնումն ու նշանակությունը չունենար հայության համար, եթե անգուցական արվեստով այն վերարտադրած չլիներ Եղիշե պատմիչը: Իր գովասանքների մեջ խիստ ժլատ Մանուկ Աբեղյան գրականագետը գրում է. «Մեր այս հեղինակը (իմա Եղիշեն—Ս. Ա.) ստեղծել է իր երկի շատ հատվածներով մի այնպիսի բանաստեղծական պրոզա, որ շատ ընտիր է, երբեմն շքեղ, լի քնարերգությամբ, և որի նմանը դեռ չի առաջ բերել մեր նոր գրականությունը»¹⁰: Իսկ մասնավորեցնելով խոսքը «Տիկնայք փառիկստունք» հատվածի մասին, ասում է. «Ուսմեր պատմագրի երկի... բանաստեղծական ընտրելագույն կտորներից մեկն է, որի նմանները իր ժամանակի համաշխարհային գրականության մեջ անգամ քիչ կան» (անդ, էջ 342): Եղիշեի Վարդանանց հերոսապատումը այսպես է գնահատել նաև համաշխարհային հռչակի արժանացած գիտնական, գերմանացի հայագետ Յոզեֆ Մարկվարտը: Նա գրում է. «Միջնադարյան ո՛ր ժողովուրդը կկարողանա պարծենալ, թե երբևիցե կարողացել է իր սեփական լեզվով կամ թեկուզ միայն բախտավոր լատիներենով հրապարակ հանել Վարդանի և իր ընկերների դյուցազնամարտի այնպիսի մի նկարագրություն, ինչպիսին է Եղիշե վարդապետի նկարագրածը»¹¹:

Վարդանանց և Ղևոնդյանց սխրանքն ու նահատակությունը համազգային մեծ իրադարձություն էր և գեղարվեստական բարձրարժեք արտահայտություններ ստացավ:

Վարդանանք բռնության դեմ հերոսանալու, քաջարտության, ազատասիրության և քաղում այլ առաքինությունների խտացումն են, հայության հավերժության խորհրդանիշը,—ահա այս իմաստով նրանք մեզ ժամանակակից են և արժանի ամենայն հարգանքի և հիշատակության: Իսկ նրանց

գործի հանդեպ երախտագիտության լավագույն ապացույցը այս տարի Երևանում կանգնեցված Վարդան գորավարի բարձրակերտ հուշարձանն է:

Հավել՛րժ փառք Վարդանանց և Ղևոնդյանց նահատակներին:

Տեսուչ տ. Հովհաննես ավագ քահանան հրավիրում է Հայոց Հայրապետին Իր օրհնության խոսքն ասելու և տալու Իր պատգամը ազգային մեծ տոնի առիթով:

Նորին Սրբությունն Իր գոհունակությունն է հայտնում, որ այս տարի ևս սրբոց Վարդանանց և Ղևոնդյանց տոնին ինքն ուրախությունն ունեցավ ներկա լինելու և՛ Մայր տաճարում, և՛ ճեմարանի հարկի տակ Ղևոնդյանց և Վարդանանց նվիրված հանդեսին:

«Այսօր,—ասաց Նորին Սրբությունը— երջանիկ է Հայոց Հայրապետը ս. Լուսավորչի զահից Իր օրհնությունը բերելու Վարդանանց մարտիրոսների ս. հիշատակին: Ամեն տարի Վարդանանց տոնին նվիրական պարտականություն է՝ հավաքվել և մեր գիտակցության առաջ բացել հորիզոնը մեր պատմության՝ տեսնելու համար հույակերտ պատկերը Վարդանանց հերոսների: Այս տարի Ավարայրի հերոսամարտը մենք ոգեկոչում ենք մի քիչ բացառիկ պայմաններում, որովհետև մեր մայրաքաղաքի գեղեցիկ պողոտաներից մեկում բարձրացավ Վարդան Մամիկոնյանի բրոնզյա հույակերտ արձանը: Մայրաքաղաքի մեջ կանգնած այդ արձանը զայիս է հավերժացնելու Վարդան Մամիկոնյանի նվիրական հիշատակը: Ամեն հայրենասեր մարդ պետք է իր սրտում պահի սուրբ Վարդանին և խոնարհվի նրա արձանի առջ: Վարդանը մեր ազգային հերոսն է, որն իր զինակից և գաղափարակից ընկերների հետ անսակարկ իր արյունը թափեց «վասն խղճի ու վասն հայրենյաց ազատության»: Այդ հերոսամարտում Վարդանը տեսնում էր ոչ միայն Ավարայրը, այլև բովանդակ հայության պայծառ ապագան, որա համար էլ նա աներկյուղ ու մեռնելու պատրաստ, քաց ճակատով գնաց թշնամու դեմ և իր նահատակությամբ նվաճեց անմահությունը:

Վարդանի օրինակը սերունդներ է դաստիարակել և ոգեշնչել: Այսպես է, որ մեր պատմության մեջ ունեցել ենք այնպիսի հերոսներ և մեծ հոգի կրող քաջեր, որոնցով մեր ժողովուրդն այսօր հպարտանում է:

Եթե իսկապես հավատքը, ազատության գաղափարը դատարկ խոսքեր չեն, ուրեմն մեր պատմության բոլոր Վարդաններն ու

¹⁰ Մ. Աբեղյան, Երկեր, հ. Գ, Երևան, 1968, էջ 338:

¹¹ Տի՛ս «Մեսրոպ Մաշտոց» ժողովածու, Երևան, 1962, Յ. Մարկվարտի հոդվածը, էջ 127:

Ղևոնդ երեցները ոչ միայն հերոսներն են մեր ժողովրդի, այլև համայն ազատատենչ մարդկության: Մենք ուզում ենք նրանց հիշատակը սուրբ պահել, որպեսզի մեր ժողովուրդը մնա անսասան ու անվեհեր և տոչորվի միշտ այն ոգով, որով տոչորված էին Վարդանանց և Ղևոնդյանց սուրբերը»:

Հայոց Հայրապետն իր հայրենաշունչ խոսքն ավարտեց ընդհանուր խանդավառության մեջ, հայ եկեղեցու պայծառության, մեր վերածնված Հայոց աշխարհի բարօրության և աշխարհի խաղաղության սրտաբուխ մաղթանքներով:

Մայր Աթոռում սրբոց Ղևոնդյանց և սրբոց Վարդանանց նվիրված հանդիսությունն ավարտվեց խմբովին երգված Տերունական աղոթքով և Հայոց Հայրապետի «Պահպանիչ»-ով:

Ժամը 15-ին հոգևոր ճեմարանի տեսչական ու դասախոսական կազմը և ուսանողությունը մեկնեցին Երևան, այցելեցին վերջերս մայրաքաղաքում կանգնեցված քաջն Վարդան Մամիկոնյանի հուշարձանին և մեխակներ դրեցին:

